# Տնօրենների ընտրություններ՝ ՀՀ ԳԱԱ-ում

Երեկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում տեղի ունեցան ԳԱԱ-ի 4 գիտական կազմակերպությունների տնօրենների ընտրություններ:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն ընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր Բարդուխ Գաբրիելյանը: ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց պատմական գիտությունների թեկնածու Պավել Ավետիսյանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Սաֆրաստյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում: ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժիրայր Վարդանյանը:

Այս մասին հայտնում են ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնից: